ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Պուլկարիոյ համար
Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 »
Օտարաշխարհի համար Տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »
Ամերիկայի համար
Տարեկան 2.50 տոլ.
Վեցամսեայ 1.25 »
ԾԱՆՈՒՑՄԱՆ ՎՃԱՐԸ
Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ է. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. Երեքէն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ։

# ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ
Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

)( ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ )(

Նամակ եւ դրամ ղրկել Խմբագրութեան հասցէին

Редакция на вѣстникъ «Шаржумъ» Варна,

Redaction du journal «Charjoum» Varna (Bulgarie)

Դրութիւնք ետ չեն տրուիր

)( ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ )(

## ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Ըլիվէնի բաժանորդներուն.— Կը խնդրենք որ հաճին անմիջապէս յանձնել Պարոն Խաչիկ Թօհաթճեանի իրենց բաժնեգինները։

— Սօֆիայի բաժանորդներուն.— Կը խնդրենք որ բաժնեգինները ուղղակի խմբագրութեանս ղրկել. իսկ անցեալ տարուան մեր գործակալէն կը խնդրենք որ իր մօտ հաւաքուած բաժնեգինները շուտպէ մեզի հասցնել։

— Շումլայի մեր բաժանորդներէն.— Կը խնդրենք որ բաժնեգինները անմիջապէս հաճին յանձնել Պ. Յ. Պօյաճեանի։

— Ռուսչուք, Մ. Թ.— Ձեր ուղարկած 35 ֆր.ք. 75 սանթիմը ստացուած է։ Պ... եանէն ստացէք։ Հօս տեղեկութիւն չունին։

— Վահրամ Գ.— Բարեհաճեցէք ձեր պարտքը վճարել. դուք ճիշդ չէք խօսած մեր գործակալին։

— Պուղարէսա Պ. Անտօն Վ. Նիկ.— Հաճեցէք պարտքերնիդ ղրկել։

Պ. Ճ. Հաճեցէք նոյնպէս ձեր պարտքը վճարել և միանգամայն գանձուած դրամները ղրկել. ինչ որ սպասեցինք այն ալ բաւական է։

— Վաթերդոուն Մաս. Ս. Փ.— Ձեր ղրկած երկու տոլարը ստացանք։

— Բարիզ Գ. Մ.— Հաճեցէք ուղարկել ձեր հասցէն, թերթերը ղրկելու համար։

ՀԱՅԿԱԿԱՆ ՆԵՐԿՍԵՌ ԿՐԹԱՐԱՆ, ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ՑԵՐԵԿԵԱՅ

Բ. ՏԱՐԵՇՐՋԱՆ

Կը վերաբացուի Սեպտեմբեր 1ին։ Ընդունելութեան պայմաններու եւ ուրիշ տեղեկութեան համար դիմել՝ նամակով կամ անձամբ՝ առ

Հիմնադիր-Տնօրէն
Հայկական Կրթարանի
ԿՐՕՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Վառնա, 18 Օգոստոս

2—3

—)(—

## ՌՈՒՍՉՈՒԿԸ

Անցեալ օրերը Ռուսչուկի եկեղեցին կատարեալ պաշարման մէջ է եղել, ինչպէս ցոյց են տալիս մեզ հասած թղթակցութիւնները։

Մի քանի թրքացած հայեր, իրանց սուր կրքերին յագուրդ տալու համար՝ խաբել են ոստիկանութիւնը, եկեղեցին պաշարել տուել, որպէսզի ձերբակալել տան Օրմանեանը չը յիշվի աղաղակողներին։

Բարեբախտաբար խաբված ոստիկանութիւնը, հասկանալով գործի էութիւնը, ձերբակալվածներին ազատ է արձակել։

Ուրիշ կերպ էլ չէր կարող լինել, որովհետեւ բուլգար ոստիկանութիւնը օրէնքի է հնազանդում և նոյնչափ ատում է թրքական բարքերը, որչափ և ամէն մի ազնիւ հայ։

* * *

Ճշմարիտ, այդպիսի բարոյական անկում, այդպիսի ցածութիւն անկարելի էր սպասել Ռուսչուկցի մի քանի չորպաճի ազաներից և իրենց աջակից տէր բաբայից։

Այո, մեզ շատ վաղուց յայտնի էր որ դրանցից մի քանիսը ձեռք ձեռքի տուած այդ սեւ փարաջաւորին՝ տասնեակ տարիներով կեղեքել են Ռուսչուկի հայութիւնը և խեղդել իրանց ճանկերի մէջ, բայց և այնպէս չէինք սպասում որ կատարեալ թուրք կը դառնան։

Այս չարաբաստիկ խմբակի շնորհիւ մինչեւ օրս էլ Ռուսչուկի հայութեան կեանքը մնացել է նոյն սոխական ճահիճը, որը եթէ մի քիչ խառնես, սարսափելի գարշահոտութիւն դուրս կը տայ... Բայց ամէն բան վերջ ունի. ամէն մի Ռուսչուկցի հայ չէր կարող դիմանալ այդ ճահճի մահացնող գարշահոտութեան և կը ձգտէր փոքր ինչ թարմ ու մաքուր մթնոլորտ ստեղծելու։

* * *

Այդ կենտրոնաշ ձգտումը որոշ կերպով երեւաց անցեալ օրվայ խառնակութիւնների միջոցին։ Ռուսչուկի հայ երիտասարդութեան մի մասը բարոյական ապտակը հասցրեց այն ազաներին, որոնց միակ զէնքը մատնութիւնը և ստորնութիւնը է երբ հակառակորդները կարեւորութիւն չեն տալիս դրանց և արհամարհում են։

Նրանց հասկացրեց որ չորպաճիների դարը Ռուսչուկում անցել է և այն փտած հասարակական կեանքը, որի սիւները կազմում են թրքական ուղեղով փտած չորպաճիները՝ Քրիստոսի սուտ աշակերտով միասին, խորտակվում է և շուտով կը խորտակվէ բոլորովին։

Մինչ այդպէս է. այնտեղ, ուր մարդիկ իրանց կեանքը հիմնել են սարկական հնազանդութեան վրայ և ճնշում են հասարակական ամէն մի մաքուր ու գաղափարական երեւոյթ, օրինաւոր և ազատական անհնազանդութիւնը միայն կարող է տապալել այդ վնասակար դրութիւնը։

Եւ մինչ պէտք է տապալել։

Բուլգարիան ազատ երկիր է ազատ օրէնքներով։ Այդ օրէնքները թոյլ են տալիս օրինաւոր կռիւ մղելու և պէտք է մղել։

ՎԱՐԴՕ

## ԵԳԻՊՏԱՑԻՒՆ ԳԵՐԵԶՄԱՆԸ

Ներկայ տարուան այս վերջին կիսամեակը նշանաւոր կը դառնայ՝ Եգիպտահայերու լճացած կեանքին մէջ յայտնուած՝ կենդանութեան քանի մը մխիթարական երեւոյթներով։ Եւ այս անգամ հեղ հաղորդելիք լուրս եթէ ոչ միթինկներու ու «չքեղաւոր» յաղթութեան չափ խոշոր՝ բայց գոյցէ աւելի ուրախալի է. մանաւանդ հիմա, երբ շնորհիւ կարգ մը զարտուղերջիկ քննադատներու, «երեկուան պաշտածը այրելը» հետեւողութեան սկզբունք կը հաշւուի, և տակաւ անարգական մոռացումի կը մատնուի յիշատակը՝ հայութեան այն նախանձախնդիր զաւակներուն, որոնք դեռ նոր այդ երկրին մէջ ինկան։

Թերեւս շատերը մոռցած են որ Աղեքսանդրիայի հայոց գերեզմանոցին մէջ կը հանգչի Եգիպտացին, որու հողակոյտը՝ իր մտերիմներուն միայն ծանօթ՝ երկու տարիէ ի վեր անշուք կը մնար։ Այդ օրէն ի վեր շատ մեռելոցներ եկան անցան, երբ մինչդեռ լոկ իրենց շիրիմներուն արժէքովը գնահատելի մեռելներուն վրայ մեր կրօնականները վճարուած աղօթքներ կը յեղյեղէին, անդին, մեր յեղափոխական պատմութեան դէմքերէն մէկը պարունակող այս հողմարին կայցելէին քանի մը աղքատիկ երիտասարդներ միայն։ Սակայն այս տարի խումբ մը երիտասարդներ յաջողեցան վերջապէս հանգանակութեամբ շիրիմ մը կանգնել, և այս Վարդավառի մեռելոցին՝ հանդիսաւոր հոգեհանգիստ մըն ալ կատարել տալ։ Պաշտօնը կատարելու հրաւիրուած էր մասնաւորապէս Զէյթունցի հռչակաւոր Բարթուղիմէոս վարդապետը, որ հանգստեան աղօթքները «ի խորոց սրտի» կարդալէ ետքը, իր լեռնականի պարզ և ազդու ոճով յորդորեց ներկաները՝ հետեւիլ հանգուցեալի օրինակին, և օրինակին դեռ այն հազարաւոր քաջերուն, որոնց ոսկորները հայրենի դաշտերուն ու ձորերուն մէջ ցիրուցան՝ կը մնան անթաղ։ Յետոյ միեւնոյն իմաստով խօսեցան նաեւ երկու երիտասարդներ։

Շիրիմը, շինուած է մէկ մէտրէ աւելի բարձր, պարզ ու հաստատուն, և շրջափակուած երկաթէ վանդակապատով. ամբողջ ծախքը 10 ոսկիէն աւելի եղած է։ Տապանագիրն ալ յեղափոխականի մը վայել պարզութիւնը ունի։

«Եգիպտացի»
Արտաշէս Մինասեան
Տրապիզոնցի
1879—1897
Անձնուէր յեղափոխականի յիշատակին
Իր ընկերներէն

ԿԱՐԻՃ

Աղեքսանդրիա, 8 Օգոստ.

—)(—

